ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2026 թվականի N 334 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 1129-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին» N 1129-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) N 1 ցուցակում «MMBA(N)-018 (N-(1-կարմաբոիլ-2,2-դիմեթիլպրոպ-1-իլ)-1-պենտիլ-1H-ինդազոլ-3-կարբոքսամիդ)» բառերը փոխարինել «MMBA(N)-018 (N(1-կարբամոիլ-2,2-դիմեթիլպրոպ-1-իլ)-1-պենտիլ-1H-ինդազոլ-3-կարբոքսամիդ)» բառերով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«N-պիրոլիդինո պրոտոնիտազեն,

N-պիրոլիդինո մետոնիտազեն,

Էտոնիտազեպիպն,

N-դեզեթիլ իզոտոնիտազեն:».

2) N 3 ցուցակը «Կամազեպամ» բառից հետո լրացնել «Կարիսոպրոդոլ» բառով, իսկ «Հալոպերիդոլ» բառից հետո լրացնել «Հեքսահիդրոկանաբինոլ» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ